# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնք,
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Թալին, Գայի 1, Հեռ. 060757787, talinihamaynqapetaran@list.ru

N 2822
22 օգոստոսի 2023թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Ավանեսյան**

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյանը» /այսուհետ մատակարար/ 26.06.2023թ.-ին կնքել են թիվ ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/63-2 ծածկագրով մատակարարման պայմանագիր 4, 5, 6, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 34, 36, 37, 38, 39, 40, 46, 47 չափաբաժինների համար:

«Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ի կողմից պայմանագիրը կատարվել է մասնակի, մասնավորապես սահմանված ժամկետում չի մատակարարել 13, 14, 15, 20, 21, 22, 23, 24, 34, 38, 39, 46, 47 չափաբաժինների ապրանքները:

18.08.2023թ-ին վերը նշված չափաբաժինների մասով պայմանագիրը միակողմանի լուծարվել է ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ա/ ենթակետի համաձայն /11.08.2023թ-ին հրապարակվել է պաշտոնական կայքէջում և ծանուցվել է էլ փոստով/:

Խնդրում ենք սկսել «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ ներառելու ընթացակարգ:

Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության 19.05.2022թ. թիվ 727-Ն որոշմամբ սահմանված ձևաչափին համապատասխան տեղեկատվությունը.

| Մասնակից | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Ա/Ձ Ռուբեն Անդրեասյան»- | 63197487 | ք.Վանաձոր Ավետիսյան փող 17 | | + | | 21.08.2023թ. թիվ 1040-Ա ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/63-02 |

Կից ներկայացնում ենք պատվիրատու ղեկավարի որոշման, գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացության և պայմանագրի պատճենները:

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Ս.ՄԿՐՏՉՅԱՆ**